

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Օգտվելով քարտեզագրական հետազոտության մեթոդից՝ քարտուրսի սալերի տեղաշարժերի տեսությունը մշակեց.

- 1) Ա. Վեգեները
- 2) Վ. Դոկուչանը
- 3) Օ. Շմիդտը
- 4) Ա. Հումբոլդտը

2

Լիալուսինը կեսգիշերին երևում է.

- 1) հյուսիսում
- 2) հարավում
- 3) արևմուտքում
- 4) արևելքում

3

Որքա՞ն է հարավարևմտյան կողմի ազիմուտը:

- 1)  $225^\circ$
- 2)  $270^\circ$
- 3)  $315^\circ$
- 4)  $135^\circ$

4

Նկարում 1-ում ի՞նչ պրոյեկցիա է պատկերված:

- 1) ազիմուտային
- 2) գլանային
- 3) կոնային
- 4) հասարակածային



Նկար 1

5

Երկու կետերի իրական հեռավորությունը 48 կմ է: 1 : 800 000 մասշտաբի քարտեզում նրանց հեռավորությունը կլինի.

- 1) 6 սմ
- 2) 60 սմ
- 3) 600 սմ
- 4) 0,6 սմ

6


Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը դեկտեմբերի 22-ին է:
- 2) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին է:
- 3) Հասարակածում ամբողջ տարվա ընթացքում գիշերվա ու ցերեկվա տևողություններն իրար հավասար են:
- 4) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը հունիսի 22-ին է:

7

Նկար 2-ում ո՞ր տառով է նշված երկրագնդի ներքին միջուկը:


- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



նկար 2

8

Նկար 3-ում ի՞նչ է պատկերված:



նկար 3

- 1) գրաբեկ
- 2) պլատֆորմ
- 3) գետսինկլինալ
- 4) հորստ

9

12 ամիսների օդի միջին ջերմաստիճանների գումարը բաժանելով տարվա ամիսների քանակի վրա՝ կարելի է որոշել օդի.

- 1) միջին տարեկան ջերմաստիճանը
- 2) ջերմաստիճանի լայնույթը
- 3) միջին ամսական ջերմաստիճանը
- 4) առավելագույն ջերմաստիճանը

10

Ընտրել կլիմայի բնորոշ գծերի և կլիմայի տիպերի համապատասխանությունների ճիշտ շարքը.

- |   |                      |
|---|----------------------|
| 1. ջերմաստիճանի մեծ տատանումներ և տարվա ընթացքում անհավասարաչափ բաշխված քիչ տեղումներ | ա. ծովային կլիմա     |
| 2. ջերմաստիճանի փոքր տատանումներ և ամբողջ տարին թափվող առատ տեղումներ                 | բ. մուսսոնային կլիմա |
| 3. մեղմ ու խոնավ ձմեռներ և տաք ու չոր ամառներ   | գ. ցամաքային կլիմա   |
| 4. ցուրտ ու չոր ձմեռներ և տաք ու խոնավ ամառներ  | դ. միջերկրածովային   |

- 1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա

11

Օվկիանոսի առափնյա գոտում մինչև 200մ խորությամբ տեղամասը կոչվում է.

- 1) փողրակ
- 2) մայրցամաքային լանջ
- 3) ցածրավայր
- 4) մայրցամաքային ծանծաղուտ

12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Գետի թեքությունը գետի անկման հարաբերությունն է նրա երկարությանը:
- 2) Լեռնային շրջաններում գետերի ջրբաժանն անցնում է լեռնաշղթաների ստորոտի ամենացածր մասով:
- 3) Տարվա ընթացքում գետի ջրի մակարդակի տատանումները կոչվում է գետի տարեկան հոսք:
- 4) Ամեն տարի՝ նույն սեզոնին, գետի ջրի քանակի ավելացման երևույթը կոչվում է ծախս:

13

Տարվա ընթացքում ո՞ր լճերի մակերեսն է զգալիորեն փոխվում.

- 1) Վերին և Նյասա
- 2) Էրի և Օնեգա
- 3) Էյր և Չադ
- 4) Բայկալ և Բալխաշ

14

Բնական համալիրներից ո՞րն է աչքի ընկնում հողի առավել բարձր բերրիությամբ.

- 1) տունդրան
- 2) անապատը
- 3) տափաստանը
- 4) տայգան

15

«Բնական զոնա-բնորոշ բուսատեսակ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) խոնավ մերձարևադարձային անտառ-բաոբաբ, շաճառ
- 2) փշատերև անտառ- հաճարենի, դափնի
- 3) սավաննա-շագանակենի, բոխի
- 4) մերձարևադարձային կոշտատերև անտառ-խցանակաղնի, քարակաղնի

16

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Նոր դարաշրջանի վերջում կլիման զգալիորեն ցրտել է, և երկրագնդի հյուսիսային շրջանները սառցապատվել են:
- 2) Միջին դարաշրջանում երկրագնդի կլիման շոգ ու խոնավ էր, որի շնորհիվ աճում էին փարթամ անտառներ:
- 3) Գոնդվանա հնագույն մայրցամաքը մասնատվել է հին՝ պալեոգոյան դարաշրջանի վերջերին:
- 4) Եվրասիա մայրցամաքն ամբողջությամբ Լավրասիա հնագույն մայրցամաքի մասն է:

17

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Աշխարհագրական թաղանթի շատ երևույթներ ունեն գոտիական և զոնայական տարածում:
- 2) Աշխարհագրական թաղանթի շատ երևույթներ միասնական են և փոխպայմանավորված:
- 3) Աշխարհագրական թաղանթում տեղի է ունենում նյութերի և էներգիայի շրջապտույտ:
- 4) Աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող երևույթներն ու գործընթացները չեն կրկնվում:

18

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Տարածքի մեծությունը քաղաքաաշխարհագրական գործոն չէ:
- 2) Գաղութային անցյալը չի ազդել Աֆրիկայի երկրների սահմանների գծագրության ձևավորման վրա:
- 3) Պետական սահմանի անցկացումը կատարվում է 2 փուլով՝ սահմանարկման և սահմանագծման:
- 4) Պետության տարածքի ձևը չի ազդում տրանսպորտային ցանցի գծագրության, տարաբնակեցման բնույթի վրա:

19

**«Սահմանակից երկրներ-լեռներ» զուգորդումներից ընտրել *սխալը*.**

- 1) Ֆրանսիա-Իսպանիա-Պիրենեյներ
- 2) Չինաստան-Հնդկաստան-Ալպեր
- 3) Արգենտինա-Չիլի-Անդեր
- 4) Ռուսաստան-Վրաստան-Մեծ Կովկաս

20

**Խաղաղօվկիանոսյան երկրներ են.**

- 1) Վրաստանը և Թուրքմենստանը
- 2) Ճապոնիան և Ֆիլիպինները
- 3) Հունաստանը և Բուլղարիան
- 4) Նորվեգիան և Լյուքսեմբուրգը

21

**Էքսկլավ է.**

- 1) Ալյասկան
- 2) Սվազիլենդը
- 3) Սան Մարինոն
- 4) Լեսոտոն

22

**Ո՞ր պնդումն է *սխալ*.**

- 1) Զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ:
- 2) Զարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:
- 3) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
- 4) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ:

23 **Նոսր բնակեցված երկրներ են.**

- 1) Գերմանիան և Ֆրանսիան
- 2) Ինդոնեզիան և Ճապոնիան
- 3) Հայաստանը և Վրաստանը
- 4) Ավստրալիան և Կանադան

24 **Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, և ազգը դառնում է ավելի միասնական և ամրակուռ, կոչվում է.**

- 1) կոնսոլիդացիա
- 2) ուրբանիզացիա
- 3) ասիմիլյացիա
- 4) ազլոմերացիա

25 **Համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն.**

- 1) ջրէկերը
- 2) աէկերը
- 3) մէկերը
- 4) ջէկերը

26 **Մեքենաշինության տեղաբաշխման սկզբունք չէ.**

- 1) տեղաբաշխումը սպառման վայրերի մոտ
- 2) տեղաբաշխումը խիտ բնակեցված վայրերում
- 3) տեղաբաշխումը գիտական կենտրոնների մոտ
- 4) տեղաբաշխումը վառելիքային բազաների մոտ

27 **Որոշել եզիպտացորենի ցանքատարածությունների մակերեսը, եթե եզիպտացորենի համախառն բերքը 12000 տ է, իսկ միջին բերքատվությունը՝ 30ց/հա.**

- 1) 40 կմ<sup>2</sup>
- 2) 36 կմ<sup>2</sup>
- 3) 42 կմ<sup>2</sup>
- 4) 60 կմ<sup>2</sup>

28 **Բնութագրումով որոշել լիճը.**

*Ամուղարյա և Սիրդարյա գետերը թափվում են մնացորդային ծագման այդ լճի մեջ: Այդ գետերի ջրերը ոռոգման նպատակով օգտագործելու պատճառով լիճը ծանծաղել է: Ո՞ր լիճն է:*

- 1) Կասպից
- 2) Բայկալ
- 3) Արալյան
- 4) Բալխաշ

**29** Ո՞ր պնդումն է ճիշտ

- 1) Եվրասիայի տարածքի մեծ մասը պատկանում է Եվրոպային, իսկ փոքր մասը՝ Ասիային:
- 2) Եվրասիայի ամենամեծ հարթավայրը Մեծ Չինականն է:
- 3) Եվրասիայի արևելյան և հարավարևելյան շրջաններում շատ են գործող հրաբուխները:
- 4) Եվրասիայի ամենացածր կետը Մերձկասպյան ցածրավայրում է:

**30** Աֆրիկայի մերձհասարակածային գոտիներում ամառային սեզոնին տեղումների քանակը կազմում է.

- 1) 1500-1600 մմ
- 2) 250-300 մմ
- 3) 1800-2000 մմ
- 4) 500-600 մմ

**31** Ո՞ր շարքում *սիսալ* կա:

- 1) Տանգանիկա, Նյասա
- 2) Դրակոնյան, Կապի
- 3) Բենգալյան, Կարմիր
- 4) Ասսալի, Քաթթարայի

**32** Ո՞ր պնդումն է *սիսալ*.

- 1) Բերինգի նեղուցով Չուկոտյան թերակղզին բաժանվում է Լաբրադոր թերակղզուց:
- 2) Բերինգի նեղուցով են միանում Չուկոտյան և Բերինգի ծովերը:
- 3) Բերինգի նեղուցով են միանում Խաղաղ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսները
- 4) Բերինգի նեղուցով Հյուսիսային Ամերիկան բաժանվում է Եվրասիայից:

**33** Ո՞ր պնդումն է *սիսալ*.

- 1) Յուկատան թերակղզին մերձհասարակածային գոտում է:
- 2) Ֆլորիդա թերակղզին արևադարձային գոտում է:
- 3) Նյուֆաունդլենդ կղզին բարեխառն գոտում է:
- 4) Ալյասկա թերակղզին բարեխառն գոտում է:




34

Ավստրալիայում ի՞նչ լեռներ կան:

- 1) Ավստրալական Կարպատներ
- 2) Ավստրալական Ալպեր
- 3) Ավստրալական Հիմալայներ
- 4) Ավստրալական Անդեր

քարտեզ 1



35

Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Լա Պլատայի դաշտավայրը:

- 1) Է
- 2) Ս
- 3) Բ
- 4) Զ

36

Քարտեզ 1-ի վրա  $n^{\circ}$  ր տառով է նշված Օրինկո գետը:

- 1) Ե
- 2) Գ
- 3) Ը
- 4) Դ

37

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ  $n^{\circ}$  ր պնդումն է ճիշտ.

- 1) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ջրային էլեկտրակայաններում:
- 2) Ածխի արդյունահանման խոշոր ավազաններից է Կուզբասը:
- 3) Ոսկու պաշարների հիմնական մասը տեղաբաշխված է երկրի եվրոպական մասում:
- 4) Նավթի պաշարներով ու արդյունահանմամբ աշխարհում գրավում է առաջին տեղը:

38

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ  $n^{\circ}$  ր պնդումն է ճիշտ.

- 1) Կլիման բարեխառն ցամաքային է:
- 2) Մայրցամաքից բաժանված է Ջիբրալթարի նեղուցով:
- 3) Հյուսիսային ծովի ծանծաղուտից արդյունահանում է նավթ ու բնական գազ:
- 4) Աշխարհի առավել անտառապատ երկրներից է:

39

Իտալիային պատկանող կղզի է.

- 1) Սիցիլիան
- 2) Կորսիկան
- 3) Մալթան
- 4) Կրետեն

40

Տրված գույգ քաղաքներից Ֆրանսիայում են.

- 1) Լիոնը և Մարսելը
- 2) Թուրինը և Բիրմինգհեմը
- 3) Դյուսելդորֆը և Լիլը
- 4) Լյուքսեմբուրգը և Մյունխենը

41

Դեպի Միջերկրական ծով ելք *չունեցող* պետությունն է.

- 1) Իրաքը
- 2) Լիբանանը
- 3) Սիրիան
- 4) Իսրայելը

42


Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ընդերքը հարուստ է երկաթի և քարածխի պաշարներով:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնաբուծությունն է:
- 3) Ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերից է սև մետաղաձուլությունը:
- 4) Հինդուստան թերակղզու կենտրոնական մասում է տարածվում Դեկանի սարահարթը:

43

Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Համեմատաբար լավ է զարգացած հանքարդյունաբերությունը:
- 2) Հյուսիսում արդյունաբերական խոշորագույն շրջանը պղնձի գոտին է:
- 3) Տրանսպորտի զարգացման մակարդակով աշխարհում գրավում է վերջին տեղը:
- 4) Գյուղատնտեսությունը բազմատնտեսաձև է:



քարտեզ 2

44

Քարտեզ 2-ում Արարատի մարզը ո՞ր տառով է նշված.

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ը
- 4) Է

45

Քարտեզ 2-ում Աժդահակ լեռնագագաթը ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Ե
- 4) Զ

46

Ո՞ր շարքի միջլեռնային գոգավորություններն են տրված ըստ բարձրությունների աճման.

- 1) Երզնկայի, Կարնո, Նախիջևանի
- 2) Մշո, Բալահովտի, Խարբերդի
- 3) Դերջանի, Երզնկայի, Կամախի
- 4) Մշո, Մանազկերտի, Ալաշկերտի

47

ՀՀ –ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը վերջին տարիներին նվազել է:
- 2) Մարահարթերի ցածրադիր մասերում և միջլեռնային գոգավորություններում գյուղերն ունեն հոծ դասավորություն և առաջացնում են համատարած գյուղական տարաբնակեցում:
- 3) Լեռնային շրջաններում գյուղերը երբեմն դասավորված են գետահովիտների հատակային մասերով անցնող երկաթուղիների կամ ավտոխճուղիների երկայնքով:
- 4) Բարձրալեռնային գյուղերից դեպի քաղաքներ և ցածրադիր բնակավայրեր կատարվող բնակչության արտահոսքի արդյունքում բազմաթիվ գյուղեր վերացել են:

48

Ոչ գյուղատնտեսական հումքի վրա հիմնված ՀՀ սննդի արդյունաբերության ճյուղ է.

- 1) գինեգործությունը
- 2) հանքային ջրերի արտադրությունը
- 3) պանրագործությունը
- 4) պահածոների արտադրությունը

49

ՀՀ ո՞ր մարզի տարածքի զգալի մասն է ընկած Փամբակ և Չորագետ գետերի ավազաններում.

- 1) Կոտայքի
- 2) Լոռու
- 3) Տավուշ
- 4) Շիրակի

50

ԼՂՀ (Արցախի Հանրապետություն) անտառային գոտուն բնորոշ կենդանատեսակներ են.

- 1) գորշ արջն ու լուսանը
- 2) օձն ու մողեսը
- 3) բեգոարյան այծը և գայլը
- 4) կրիան և ոզնին

51

Տրվածներից ո՞րն է նպաստում մթնոլորտի մաքրության պահպանմանը.

- 1) ցեմենտի արտադրության ավելացումը
- 2) կանաչապատ տարածքների ավելացումը
- 3) ասֆալտապատ տարածքների ընդարձակումը
- 4) անտառների հատումը

52

«Բնական ռեսուրս – վերականգնման հատկություն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) կլիմայական ռեսուրս – սպառվող-վերականգնվող
- 2) երկրաջերմային ռեսուրս – անսպառ
- 3) նավթային ռեսուրս – սպառվող - վերականգնվող
- 4) կենսաբանական ռեսուրս - անսպառ

53

Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.

- 1) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը
- 2) գեյզերների ջրերում լուծված նյութերը
- 3) քիմիական պարարտանյութերը
- 4) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը

54

Հողերի էրոզիայի առաջացման պատճառներից է.

- 1) վարելահողերի մշակումը
- 2) արոտավայրերի գերարածեցումը
- 3) տնկարկների ոռոգումը
- 4) խոտհարքների օգտագործումը

55

**Ո՞ր պնդումն է ճիշտ**

- 1) Տարածքային հակամարտություններն, ըստ իրենց բնույթի, լինում են միջպետական և ներպետական:
- 2) Տարածքային վեճերը երբեք խաղաղ ճանապարհով չեն լուծվում:
- 3) Եվրոպայում այլևս վիճելի տարածքներ գոյություն չունեն:
- 4) Գլոբալացումը երկրների և ժողովուրդների ազատ ինքնորոշման և սեփական ինքնության հաստատման երևույթն է:

56

**Գրել Մեծ Անտիլյան կղզեխմբին պատկանող կղզիների համարները:**

- |                 |               |
|-----------------|---------------|
| 1) Ճամայկա      | 5) Սարդինիա   |
| 2) Վիկտորիա     | 6) Գրենլանդիա |
| 3) Պուերտո-Ռիկո | 7) Հաիթի      |
| 4) Կուբա        | 8) Վանկուվեր  |

57

**Գրել այն մայրաքաղաքների համարները, որոնք իրենց երկրի ամենախոշոր քաղաքը չեն.**

- |            |           |
|------------|-----------|
| 1) Բոգոտա  | 5) Մինսկ  |
| 2) Կահիրե  | 6) Թեհրան |
| 3) Բեյրութ | 7) Կիև    |
| 4) Բեյջին  | 8) Անկարա |

58

**Գրել այն երկրների համարները, որոնք տարածքով գերիխոշոր են.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Նիգերիա  | 5) Ճապոնիա  |
| 2) Պակիստան | 6) Բրազիլիա |
| 3) Թուրքիա  | 7) Գերմանիա |
| 4) Կանադա   | 8) Ուկրաինա |

59

**Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են.**

- |                 |            |
|-----------------|------------|
| 1) Մեծ Բրիտանիա | 5) Ճապոնիա |
| 2) Եգիպտոս      | 6) Շվեդիա  |
| 3) Իսպանիա      | 7) Լատվիա  |
| 4) Ֆինլանդիա    | 8) Դանիա   |

60

**Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».**

- |           |             |
|-----------|-------------|
| 1) Լատվիա | 5) Կանադա   |
| 2) Սիրիա  | 6) Ուկրաինա |
| 3) Եմեն   | 7) Թուրքիա  |
| 4) ԱՄՆ    | 8) Իրան     |

61 Գրել բազմամետաղային հանքավայրերի համարները.

- |              |               |
|--------------|---------------|
| 1) Սվարանցի  | 5) Թեժ լեռան  |
| 2) Մեղրաձորի | 6) Շահումյանի |
| 3) Հրազդանի  | 7) Սոթքի      |
| 4) Աբովյանի  | 8) Ախթալայի   |

62 Տրված են Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերը: Դասավորել դրանց համարները լճերի մակերեսների աճման կարգով:

- 1) Սևանա      2) Ուրմիա      3) Վանա

63 ՀՀ տրված բնակավայրերի համարները դասավորել ըստ արևոտ օրերի թվի աճման կարգով.

- 1) Գյումրի      2) Մարտունի      3) Իջևան

(64-65) Քաղաքի բնակչության թիվը 40 000 է, բնակչության բացարձակ մեխանիկական աճը՝ 800 մարդ: Ծնվածների թիվը 3000 մարդ է, մահացածների թիվը՝ 1500 մարդ:

64 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

65 Որոշել քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո:

66 Օդի բացարձակ խոնավությունը  $10\text{գ/մ}^3$  է, հարաբերական խոնավությունը՝ 40%: Որոշել հազեցման համար անհրաժեշտ ջրային գոլորշիների քանակը:

67

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 38°, արլ. ե. 147°: Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:

68

Որքա՞ն մակերես կզբաղեցնի Չինաստանը (9,6 մլն կմ<sup>2</sup>) 1 : 40 000 000 մասշտաբի քարտեզում:

69

Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
- 2) Լաբրադոր թերակղզում տունդրայի զոնայի հարավային սահմանը Ալյասկայի համեմատ ձգվում է բավականին հյուսիս:
- 3) Ամենաքիչ տեղումները դիտվում են Մեծ Ավազան սարահարթի գոգավորություններում:
- 4) Հյուսիսամերիկյան պլատֆորմի բյուրեղացած հիմքի մերկացած տեղամասերում առաջացել է Կոորդիլիերների լեռնային համակարգը:
- 5) Կլիմայի ձևավորման ամենամեծ ազդեցություն ունի Խաղաղ օվկիանոսը:
- 6) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքներն առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:

70

ՀՀ Տավուշի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Հովտային շրջաններում լայն տարածում ունեն սողանքները:
- 2) Կլիման առավելապես չորային և խիտ ցամաքային է:
- 3) Թեթև արդյունաբերության առաջատար ենթաճյուղը գորգագործությունն է:
- 4) Հարավից դեպի հյուսիս շարժվելիս մակերևույթը աստիճանաբար բարձրանում է:
- 5) Գետերը պատկանում են առավելապես Արաքսի ավազանին:
- 6) ՀՀ միակ մարզն է, որը սահմանակից է թե՛ Վրաստանին, թե՛ Ադրբեջանին: